## Տ. ՊԱՐԳԵՎ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



Ծնվել է 1954 թ. մարտի 20-ին, Սումգայիթ քաղաքում (Ադրբեջանական ՍՍՀ): Ավազանի անունն է Գուրգեն:

Նախնական կրթությունն ստացել է տեղի միջնակարգ դպրոցում:

1966 թ. ընտանիքով տեղափոխվել են Երևան, որտեղ ավարտել է դպրոցը մաթեմատիկական թեքումով:

1971—1972 թթ. ուսանել է Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի էլեկտրա-տեխնիկական բաժնում:

1972 թ. ընդունվել է Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտի ռուսաց լեզվի և գրականության բաժինը, որն ավարտել է 1976 թ.:

1976 թ. օգոստոս-նոյեմբեր ամիսներին դասավանդել է Հոկտեմբերյանի շրջանի Եղեգնուտ գյուղի դպրոցում: Նույն տարվա նոյեմբերին զորակոչվել է զինծառայության: Վերադառնալով բանակից, 1978—80 թթ. աշխատել է թեթև արդյունաբերության մինիստրության ազդերի բաժնում:

1980 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1983 թ. դեկտեմբերի 25-ին, Ս. Ստեփանոսի տոնի օրը, ձեռամբ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, ստացել է սարկավագական աստիճան:

1984 թ. գերազանց պաշտպանելով իր ավարտաճառը՝ «Զրադաշտության արձագանքները 5-րդ դ. հայ մատենագրության մեջ և պայքարը նրա դեմ», ավարտել է ճեմարանը և նույն թվականի հունիսի 22-ից անցել է աշխատանքի Մայր Աթոռի Գանձատանը:

1985 թ. սեպտեմբերի 8-ին, ձեռամբ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա և ուղարկվել Լենինգրադի հոգևոր ակադեմիա՝ լրացուցիչ աստվածաբանական կրթություն ստանալու:

1986 թ. օգոստոսի 20-ին նշանակվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի ընդհանուր դաստիարակ, միաժամանակ դասավանդելով Հիմնական Աստվածաբանություն առարկան:

Տ. Պարգև վրդ. Մարտիրոսյանն այժմ հեռակա կարգով ուսումը շարունակում է Լենինգրադում: